Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ս. Խ. Հ. ԳԱԶԸ-ԱՎԻԱՔԻՄ

# ԳԱԶԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՈՒՄ ՅԵՎ ՍՈՎԽՈԶՈՒՄ

355(47)
Գ-24

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

01 MAR 2010

Պրոլետարնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք,

Հ.Ս.Խ.Հ. ՊԱՇԸ-ԱՎԻԱՔԻՄ

355 (47)
Պ-24

ՊԱՇԸ-ԱՎԻԱՔԻՄԸ—Խ.Ս.Հ.Մ. ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

# ՊԱՇԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՈՒՄ ՅԵՎ ՍՈՎԽՈԶՈՒՄ

---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1931

18 SEP 2013
21474
40.357
БИБЛИОТЕКА Академии Наук УРСР
4945ЕКН

ԴԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. 1597.
ԳՐԱՌԵՏՎԱՐ 6319 (Բ)
ՊԱՏՎԵՐ № 2031
ՏԻՐԱԺ 3000

ՀՍՍՌ Арм.ССР
(10317-53)
22244.59

# Կազմակերպենք Պաշտ-Ավիախիմի բջիջներում կոլխոզներում յեվ սովխոզներում

Կուսակցության 15-րդ և մանավանդ 16-րդ համագումարներն ամենալայն չափով մեր առաջ դրին գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրը:

Հիմնվելով վերջին տարիների աշխատանքի փորձի, վրա՝ մեր կուսակցությունը գտավ, վոր գյուղատնտեսության հետագա զարգացումը, գյուղի չքավորի ու միջակի տնտեսական հետագա վերելքը հնարավոր է միայն և միայն խոշոր տնտեսությունների կազմակերպման՝ գյուղի կոլեկտիվացման հիման վրա:

Համեմատաբար յերկար ժամանակ չէ, վոր մենք ձեռնամուխ ենք յեղել խոշոր տնտեսություններ, սովխոզներ ու կոլխոզներ կազմակերպելու գործին, սակայն այդ կարճ ժամանակն էլ բավական է, վորպեսզի մեր բոլոր թշնամիները՝ կապիտալիզմի վերջին մնացորդ կուլակներ, նեպմանները և նրանց ագենտուրա՝ ամեն տեսակի աջ ու «ձախ» ոպորտունիստները, տեսնեն, թե վորքան մեծ են այդ ուղղությամբ մեր նվաճումները և ինչպիսի վճռականությամբ մենք արմատախիլ ենք անում կապիտալիզմը մեր յերկրում, վորպիսի հետևողականությամբ համատարած կոլեկտիվացման հիման վրա, լիկվիդացիայի յենք յենթարկում կուլակությունը վորպես դասակարգ:

Գյուղի միլիոնավոր աշխատավոր մասսաներն այսօր հզոր վճռականությամբ փշրում են դարավոր, փթած աշխատանքի ու արտադրության ձևերը և ստեղծում նոր կոլեկտիվ ձևեր: Մեր դաշտերում աշխատող տասնյակ հազարավոր տրակտորների ու գյուղատնտեսական գործիքների ներդաշնակ աղմուկի միջից սոցիալիզմի հաղթական քայլերգն է հնչում:

Մեռնում են գյուղի հին տնտեսական ձևերը: Նրա հետ միասին, իրեն մահվան վերջին մեղեդին է յերգում այն դասակարգը, վորն իր ամբողջ էությամբ կապված է տնտեսական այդ ձևերի հետ: Մեռնում է շահագործումը գյուղում— նրա հետ միասին մեռնում է նաև նրա սիմվոլ՝ կուլակը:

Ահա սրանք են տնտեսական ու քաղաքական այն հիմնական արդյունքները, վոր այս կարճ ժամանակամիջոցում մենք ունենք գյուղի սոցիալիստական վերակառուցման ֆրոնտում:

Ահա այն թվերը, վորոնք ապացուցում են այդ.

## ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Տարեթիվ | Կոլտնտեսութ. թիվը | Նրանք ընդգրկ. տնտես. թիվը | Հացահատիկ ցանքի տարածութ. հեկտար. | Տեխնիկական կուլտուրան, տարած. | Համայնացած կովերի թիվը | Համայնացրած վոչխարների թիվը | Համայնացրած խոզերի թիվը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1927 | 6 | 346 | 208 | 30 | 104 | 1,196 | 51 |
| 1928 | 96 | 2,253 | 968 | 120 | 772 | 6.216 | 61 |
| 1929 | 274 | 8,220 | 5,824 | 1,030 | 3,274 | 15.700 | 960 |
| 1930 | 400 | 18.100 | 34,210 | 4,953 | 11,276 | 47,652 | 5,300 |



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Տարեթիվ | Խորհրդ. տնտեսութ. քանակը | Ցանքերի տարածությունը | Խոշոր յեղջ. անասունների թիվը | Մանր յեղջ. անասունների թիվը | Արտադրանքը հազար ռուբլիներ. |
|---|---|---|---|---|---|
| 1928 | 12 | 302 | 603 | — | 466 |
| 1929 | 14 | 1,175 | 1,205 | 4,600 | 912 |
| 1930 | 25 | 4,900 | 4,582 | 15,000 | 2.400 |

Այս բոլորի հետ, սակայն, չպետք կարծել, վոր սոցիալիստական վերակառուցման ասպարեզում ունեցած մեր այս նվաճումներով բոլոր խնդիրները լուծել ենք արդեն: Վոչ մի րոպե չպետք մոռանալ, վոր կուլակը վոր մեր սովխոզում և կոլխոզում իր գերեզմանն է տեսնում, հանգիստ չի մնում: Նա բոլոր միջոցները գործ է դնում պայքարելու կոլխոզի, սովխոզի դեմ ամեն տեսակի աշկարա ու թաքուն միջոցներով՝ կանգ չառնելով նույնիսկ ամենախարդախ ու գձուծ միջոցների առաջ:

Քիչ չեն դեպքեր, յերբ մենք գյուղում պատահում ենք նրան ձայնակցողների: Կուլակին ձայնակցողներին յերբեմն պատահում ենք նաև կոլխոզներում ու սովխոզներում, վորոնք վոչինչ չեն խնայում պայթեցնելու կոլխոզի և սովխոզի աշխատանքները, նրա արտադրական պլանները, նրա տնտեսական ու քաղաքական աշխատանքները: Դեպքեր ունենք, յերբ կոլխոզները քայքայվել են կուլակների ու նրան ձայնակցողների պրովոկացիոն աշխատանքներից:

Դրա համար յուրաքանչյուր կոլխոզնիկ, յուրաքանչյուր չքավոր ու միջակ գյուղացի պետք աչալուրջ լինի

փշրելով հինի դասակարգային թշնամու խարդախ թակարդը:

Մեր կոլխոզներում ու սովխոզներում տնտեսական արտադրական աշխատանքների հետ միասին պետք է լայն ծավալել կոլխոզնիկների և սովխոզների բանվորների քաղաքական դաստիարակչական աշխատանքները, կազմակերպել ու աշխուժացնել հասարակական մասսայական աշխատանքները, ձևակերպել և առաջ տանել հասարակական կազմակերպությունները, համախմբել նրանց մեր կուսակցության շուրջը, հարկավոր հակահարված տալ կուլակներին ու նրա ամեն տեսակի ագենտներին և կուսակցականությամբ առաջ տանել գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը:

Որքան լավ դրված լինեն հասարակական-քաղաքական աշխատանքները, այնքան ավելի ամուր կլինեն մեր սովխոզներն ու կոլխոզները: Ինչ խոսք որ այդ բոլոր աշխատանքների կազմակերպողներն ու ղեկավարները պետք է լինեն տվյալ կոլխոզի կամ սովխոզի կոմունիստական և Լ.Կ.Յ.Ե.Մ.- բջիջներն՝ առաջին հերթին կոմբջիջը:

Հասարակական այդ կազմակերպություններից մեկը, թերևս ամենակարևորներից մեկն էլ, Պաշը ավիաքիմի բջիջն է սովխոզներում և կոլխոզներում, որոնց կազմակերպման ու նրանց աշխատանքների կարգավորման ու բովանդակությանն է, որ նվիրված է այս բրոշյուրը:

## Պաշը-Ավիաքիմի հիմնական խնդիրները սովխոզում, կոլխոզում

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և գյուղի տնտեսական-քաղաքական կառուցվածքի



վերափոխման հետ միասին, պետք է փոխվեն նաև գյուղի, ինչպես հասարակական բոլոր կազմակերպությունների, այնպես էլ ՊԱՇԸ ԱՎԻԱՔԻՄԻ աշխատանքերի ձևերն ու բովանդակությունը:

Կոլխոզշարժման ու սովխոզշինարարության ասպարեզում, գյուղում, մեր ունեցած նվաճումները, Պաշը-ավիաքիմի աշխատանքների համար նույնպես ստեղծում են խոշոր և ամուր հենարան՝ հանձինս սովխոզների բանվորների ու կոլտնտեսականների:

Պաշը Ավիաքիմի գյուղական կազմակերպությունները պետք է այնպես վերակառուցեն իրենց աշխատանքները, որ մի կողմից՝ աշխատանքի կենտրոնը տեղափոխվի կոլխոզ ու սովխոզ և մյուս կողմից՝ նա ամբողջապես գնա ամրապնդելու և ուժեղացնելու գյուղի սոցիալիստական այդ բազաները:

Բացի այդ, կոլխոզների և սովխոզների Պաշը ավիաքիմի բջիջները պետք է լավ իմանան, որ իրենց խնդիրները միայն դրանով չեն սահմանափակվում: Մեր կոլխոզներն ու սովխոզները դեռ շրջապատված են գյուղացիական չքավոր ու միջակ անհատական տնտեսություններով, որոնց մեջ Պաշը Ավիաքիմի աշխատանքները կազմակերպելու ու ծավալելու գլխավոր հենարանները պետք է լինեն կոլխոզների ու սովխոզների բջիջները:

Այս բոլորը ցույց են տալիս, որ այդ բջիջները բացի իրենց անմիջական Պաշը Ավիաքիմի աշխատանքներից, պետք է շատ լավ հասկանան ու ըմբռնեն գյուղի քաղաքական-տնտեսական խնդիրները, ակտիվ կերպով աջակցեն կուսակցության ու Խորհրդային իշխանության՝ ամրացնելու կոլխոզներն ու սովխոզները, համախմբեն չքավոր ու միջակ մասսաներին կոլխոզի

շուրջը, օգնեն ներգրավելու նրանց կոլտնտեսություն-ներում ու կուսակցության հետ միասին համատարած կոլեկտիվացման հիման վրա վճռականորեն լիկվիդա-ցիայի յենթարկելն կուլակությունը որպես դասակարգ:

Սովխոզի բանվորների ու կոլխոզնիկների կազմա-կերպվածությունն ու նրանց պայմանները հեշտացնում են նրանց մեջ մասսայական աշխատանքներ տանելու հնարավորությունները, հենց այդ կազմակերպվածու-թյունն ու նրանց աշխատանքի պայմանները հնարա-վորություն են տալիս քաղաքի բջիջների աշխատանքի ձևերն ու մեթոդները տեղափոխելու սովխոզներին ու կոլխոզներին կից Գաջը Ակխոքեմի բջիջները: Անպայ-ման տարբերություն պիտի լինի նրանց աշխատանք-ների բովանդակության մեջ, որովհետև քաղաքի բջիջ-ների պայմանները ուրիշ են, սովխոզի կամ կոլխոզնե-րի պայմանները ուրիշ և այդ պայմաններն են, որ առաջին հերթին բնորոշում են, ինչպես բոլոր կազմակերպությունների, այնպես էլ Գաջը-Ակխոքեմի բջիջների աշխատանքների բովանդակությունը:

Սովխոզների և մանավանդ կոլխոզների Գաջը Ակխո-քեմի բջիջի աշխատանքները հեշտանում են նաև նրանով, որ համարյա բոլոր կոլխոզներում ու սովխոզնե-րում կան մեծ թվով զորացրված կարմիր բանակային-ներ: Վերջիններս, Կարմիր բանակում կոփվելով, ոչ միայն ռազմական գիտություններով, այլ և ընդհա-նուր պատրաստականությամբ ու հասարակական-քա-ղաքական աշխատանքներով՝ հանդիսանում են այն հիմ-նական կադրերը, որոնք կոլխոզներում ու սովխոզնե-րում պիտի կազմակերպեն, ղեկավարեն ու գլխավորեն Գաջը Ակխոքեմի բոլոր աշխատանքները:

Նախ քան Գաջը Ակխոքեմի սովխոզներում ու կոլ-



խոզներում տարվելիք հիմնական աշխատանքներին անց-նելը, անհրաժեշտ է կանգ առնել բջիջի կազմակերպման ու անդամների գրավման կամավոր սկզբունքի վրա:

Գաջը Ակխոքեմի բջիջի կազմակերպիչն իր աշխա-տանքների հիմքում պիտի դնի կամավոր սկզբունքը: Կոլխոզնիկներին ու սովխոզնիկներին համոզելու ճանա-պարհով է, որ պիտի կազմվեն նոր բջիջներ, կամ նոր անդամներ գրավվեն յեղած բջիջների շարքերը: Դրա համար պիտի լայն ագիտացիոն կամպանիա տարվի կոլ-խոզնիկների և սովխոզի բանվորների մեջ: Նրանց լայն չափով պիտի բացատրվի Գաջը Ակխոքեմի նպատակնե-րը,— որ Գաջը Ակխոքեմը ձգտում է՝ ամրացնելու Խորհրդային Միության պաշտպանության գործն յերկրի արտաքին և ներքին թշնամիներից, ուժեղացնում է օ-դային և քիմիական շինարարությունը, օժանդակում է խորհրդային յերկրի սոցիալիստական շինարարությանը նրա ինդուստրիացման ու կոլեկտիվացման գործին, և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուց-մանը, իր առաջ խնդիր է դնում՝ ամենալայն օգնու-թյունը ցույց տալու կուսակցությանը գյուղում, առա-ջադրված հիմնական խնդիրների իրագործման ու կա-րևորագույն կամպանիաների և ձեռնարկումների անց-կացման գործում:

Ահա այս հիմնական խնդիրների շուրջն է, որ պիտի մոբիլիզացիայի յենթարկել կոլխոզնիկներին և սով-խոզնիկներին ու գրավել նրանց Գաջը Ակխոքեմի շար-քերը:

## Ինչ անելիքներ ունեն Պաշը-ավիոքիմի բջիջներում սովխոզներում յեվ կոլխոզներում

### Պաշը-ավիոքիմի խմբակներում յեվ սովխոզներում

ՊԱՇԸ-Ավիոքիմի բջիջների անելիքները չափազանց խոշոր են կոլխոզներում և սովխոզներում։ Պայմանները վերջիններիս հնարավորություն են տալիս բացի անմիջական զինվորական խնդիրներից, զբաղվելու նաև գյուղատնտեսական անմիջական հարցերով՝ ինչպիսին են՝ գյուղատնտեսության մեքենայացումը, հողի քիմիական պարարտացումը, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելը, ագրո-մինիմումի և զոոմինիմումի կիրառումը և այլն։

Վերոհիշյալ հարցերը, անպայման, չպիտի շեղեն ՊԱՇԸ-Ավիոքիմի բջիջների աշխատանքն իրենց հիմնական—ռազմական խնդիրներից։ Ինչպես ամեն տեղ, այնպես էլ կոլխոզներում ու սովխոզներում, ՊԱՇԸ-Ավիոքիմի ընկերության հիմնական հարցը մնում է յերկրի պաշտպանության գործին նպաստելը և ընկերության անդամների զինվորական ռազմական պատրաստականությունը բարձրացնելը։

Կոլխոզի և սովխոզի պայմաններում այդ նպատակով, հնարավոր է ըստ զինվորական զանազան մասնագիտությունների կազմակերպել մի շարք ռազմական խմբակներ։

Այսպես, օրինակ՝ հնարավոր է կազմակերպել հետևակ, հեծելազոր, կապի և այլն խմբակներ։

Կոլխոզներին կամ սովխոզներին կից գոյություն ունեցող դպրոցների վերաբերմամբ ՊԱՇԸ-Ավիոքիմի



բջիջը պիտի բոլոր միջոցները ձեռք առնի ապահովելու ուսանողների զինվորական պատրաստման գործը։ Այս աշխատանքային լայն չափով պիտի մասնակից անել լուսավորության բոլոր օրգանները։

ՊԱՇԸ-Ավիոքիմի գծով զինվորական աշխատանքները պիտի կազմակերպել նաև պիոներական կոլեկտիվներում՝ նրանցից պատրաստելու սոցիալիզմի ապագա մարտիկներ։ Այստեղ աշխատանքներն ավելի շատ պիտի գնան պիոներին Կարմիր բանակի կյանքի ու կենցաղի հետ ծանոթացնելու գծով։ Պետք է սիստեմատիկ աշխատանք տանել, վորպեսզի պիոներներն ուսումնասիրեն Կարմիր բանակի ու ռազմա-նավատորմիղի պատմությունը, նրա պանծալի անցյալն ու հերոսական պայքարը քաղաքացիական պատերազմների ժամանակ։ Ահա այդ խնդիրների պարզաբանման ընթացքում պիտի դաստիարակել սոցիալիզմի ապագա մարտիկներին և սովորեցնել նրանց զինվորական գործը՝ խորհուրդների յերկրի պաշտպանության համար։

Այս խնդիրներում ՊԱՇԸ-Ավիոքիմի բջիջներին անփոխարինելի օգնություն կարող են ցույց տալ զորացրված կարմիր բանակայինները։

Այսպիսով՝ ՊԱՇԸ-Ավիոքիմի բջիջների առաջին և հիմնական խնդիրն է,—կազմակերպել ռազմական խմբակներ—տալ զինվորական պատրաստություն նրանց մատաղ սերունդը դաստիարակել Կարմիր բանակի հերոսական պատմության հիմունքներով։

Բացի այս հիմնական խնդիրներից, սովխոզի և կոլխոզի պայմաններում ՊԱՇԸ-Ավիոքիմի կազմակերպությունները հնարավորություն ունեն կազմակերպելու մի շարք այլ խմբակներ, վորոնց աշխատանքները

նույնպես կապված են ռազմական խնդիրների հետ և դրանք նույնպես կգնան ամրացնելու յերկրի պաշտպանության գործը:

Այսպես, օրինակ՝ կոլխոզներում և մանավանդ սովխոզներում լայն հնարավորություն կա կազմակերպելու ավտո-մեքենաների և տրակտորների ուսումնասիրության խմբակներ, վորոնց աշխատանքներին անպայման պետք է մասնակից անել հասարակական այլ կազմակերպություններին ինչպես օրինակ՝ Ավտոդորին: Այդ խմբակների միջոցով կոլխոզնիկներից և սովխոզի բանվորներից պետք է պատրաստել գյուղատնտեսության մեքենայացման համար նոր կադրեր՝ շոֆերներ, տրակտորիստներ և այլն:

Բացի այդ, բոլոր կոլխոզներում և սովխոզներում լայն հնարավորություն կա ուսումնասիրելու ձիաբուծությունը, ձիու պահպանելու, խնամելու գործը: Համայնացված ձիաբուծությունը կոլխոզներում, նրա միահավաք դրությունը սովխոզներում և ընդհանուր ախոռները, խոշոր նախապայմաններ են ՊԱԶԸ-Ավիոքիմի կազմակերպությունների համար՝ այդ գործը կանոնավոր հիմքերի վրա դնելու: Այդ աշխատանքների համար նույնպես անհրաժեշտ են, վոր կազմակերպվեն հատուկ խմբակներ:

Բացի այդ, բոլոր կոլխոզներում և սովխոզներում ՊԱԶԸ-Ավիոքիմի անմիջական աշխատանքների մեջ է մտնում նաև՝ ձեռնարկելու կոլխոզի կամ սովխոզի օդային-քիմիական պաշտպանության գործը, վորի համար պետք է կազմակերպել առանձին խմբակներ:

Այդ խմբակների աշխատանքների համար պարարտ հող կա, մանավանդ վոր գյուղատնտեսության ասպա-



րեզում կատարվելիք աշխատանքներում, վորի մասին կխոսենք մի քիչ հետո, պետք է լայն չափով ծավալել կոլխոզնիկների և սովխոզի բանվորների քիմիական անգրագիտության վերացման գործը: Դաշտերի արհեստական-քիմիական պարարտացումը, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարը (քիմիական թույների միջոցով) օդային-քիմիական հարձակումներից կոլխոզների և սովխոզների շենքերի հակաքիմիական պաշտպանության կազմակերպումը և այլն, ստեղծում են բոլոր նախապայմանները կազմակերպելու քիմիական խմբեր:

Այդ խմբերի գործն այն պետք է լինի, վոր բացի վերոհիշյալ խնդիրներից, յուրաքանչյուր կոլխոզնիկի և սովխոզի բանվորին պատրաստեն դիմադրելու օդային-քիմիական հարձակմանը:

Այդ աշխատանքներին պետք է առանձնապես մասնակից դարձնել կանանց՝ կոլխոզուհիներին և սովխոզի բանվորուհիներին, վորովհետև պատերազմի ժամանակ գլխավորապես նրանք պետք է լինեն այն հիմնական ուժերը, վորոնք թիկունքը պետք է պաշտպանեն օդային-քիմիական հարձակումից:

Սրա հետ միասին ՊԱԶԸ-Ավիոքիմի բջիջները կոլխոզներում, մանավանդ սովխոզներում, խոշոր դեր ունեն կատարելու ավիացիայի ասպարեզում: Այս ասպարեզում նույնպես անհրաժեշտ է կազմակերպել ավիացիայի գործն ուսումնասիրող, ավիո-մոտորիստներ պատրաստող և այլ տեսակի խմբակներ:

Կոլխոզներին և սովխոզներին կից ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպվելիք կարևորագույն խմբակներից մեկն էլ մոդելիստների խմբակն է: Այս խմբակներում պետք

ընդգրկել առավելապես պատանի կոլտնտեսականներին ու սովխոզի բանվորների յերեխաներին՝ մանավանդ պիոներական կազմակերպությունը:

ՊԱԶԸ-Ավիոքիմի բջիջն իր վերադաս շրջանային օրգանների միջոցով պետք կազմակերպի նրանց համար մոդելիստների շրջանային մրցություններ, այդ գործին մասնակից անելով վորքան կարելի յե լայն մասսաներ:

Այդ մրցությունները լայն չափով պետք է օգտագործել խորհրդային յերկրի օդային ուժերն ամրացնելու, մասնավորապես միջոցներ գանձելու «Կոլխոզնիկ» դիրիժաբլի կառուցման համար, տարածելու համապատասխան ժուռնալներ, ինչպես օրինակ՝ «ՊԱԶԸ-Ավիոքիմ», «Ավիացիա» և «Քիմիա» ու «Ինքնաթիռ»:

Կազմակերպվելիք բոլոր խմբակներում պետք լայն չափով մասնակից անել բանվոր և կոլտնտեսական յերիտասարդությանը՝ մանավանդ կոմյերիտական բջիջներին, վորի համար ամբողջ աշխատանքները պետք համաձայնեցնել կոմյերիտական բջիջների հետ ու տանել նրանց անմիջական մասնակցությամբ:

Վերոհիշյալ բոլոր խմբակները, բացի իրենց հիմնական աշխատանքներից՝—ուժեղացնելու յերկրի պաշտպանության գործն և նրա շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու չքավոր ու միջակ գյուղացիության հիմնական մասսաների ուշադրությունը այն կարեվոր նշանակությունն ես ունեն, վոր կոլտնտեսականների և սովխոզի բանվորներից պատրաստում են ՊԱԶԸ-Ավիոքիմի կոչված ակտիվը:

Բացի այդ, հայտնի յե, վոր խորհրդային իշխանության ամեն տարի, յերկրի բոլոր մասերում, կազ-



մակերպում է հարյուրավոր ու հազարավոր կուրսեր, տեխնիկումներ, ու ինստիտուտներ, վորտեղ ընդունվում են բազմաթիվ բանվորներ, կոլխոզնիկներ ու գյուղացիներ:

Ահա այդ խմբակների բովից անցած բանվորն ու կոլտնտեսական ակտիվն է, վոր այնտեղ պատրաստվելով՝ առաջին հերթին պետք ընդունվի համապատասխան ավիա, տրակտորային, ավիո և այլ կուրսերը, տեխնիկումներն ու ինստիտուտները:

## Պազը-ավիոքիմի աշխատանքները գյուղատնտեսության ասպարեզում

ՊԱԶԸ-Ավիոքիմի բջիջները կոլխոզներում և սովխոզներում մեծ անելիքներ ունեն գյուղատնտեսության զարգացման գործում:

Հայտնի յե, վոր գյուղատնտեսության զարգացման խնդրում, մանավանդ բերքատվության բարձրացման համար, խոշոր նշանակություն ունի հողի արհեստական պարարտացումը:—Ահա գյուղատնտեսության այդ կարեվորագույն գործում ՊԱԶԸ-Ավիոքիմի կազմակերպությունները պետք ցույց տան իրենց ամենաակտիվ մասնակցությունը:

Մեր կազմակերպությունները իրենց ձեռքը պետք վերցնեն հողի արհեստական պարարտացման շուրջը, ինչպես կոլխոզներում և սովխոզներում, այնպես էլ գյուղացիության մեջ լայն բացատրական պրոպագանդա ծավալելու, նրա անմիջական կիրառման գործը: Միաժամանակ նրանք պետք աշխատանք տանեն այն ուղղությամբ, վոր մանավանդ կոլխոզները մեծ ուշադրու-

թյան դաշտերը, նպատակահարմար և կազմակերպված ձևով օգտագործելու տեղական պարարտացման միջոցները:

ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջները նույնիսկ հնարավորություն ունեն այդ ասպարեզում կազմակերպելու ցուցադրական աշխատանքներ, շրջապատի անհատական տնտեսություններին նույնպես ապացուցելու ընդհանրապես հողի պարարտացման և մասնավորապես արհեստական պարարտացման նշանակությունն ու առավելությունները, նրանց մեջ ևս տարածելու պարարտացման գործը:

ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջները կոլխոզներում և սովխոզներում առանձնապես մեծ անելիքներ ունեն գյուղատնտեսության վնասատուների (մկների, մորեխի, բույսերի և ծառերի զանազան հիվանդությունների և այլն) դեմ պայքարելու գործում:

Ամեն տարի մեր կազմակերպությունները անց են կացնում գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի շաբաթ: Մեր բջիջները պետք գլխավորեն այդ աշխատանքները՝ աշխատելով որքան կարելի է գյուղացիության մասնակից անել այդ գործին:

Դրա համար ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջները պետք է առաջադրեն առանձին ղեկավարներ, կազմակերպեն հատուկ բրիգադներ՝ մասնակից անելով այդ աշխատանքներին մասնագետ գյուղատնտեսներին:

Միաժամանակ ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջները սովխոզներում և մանավանդ կոլխոզներում պետք լայն աշխատանք ծավալեն ագրոմինիմումի կիրառման համար և ամեն կերպ աշխատեն բարձրացնել ագրո-ձեռնարկումների գործը:



Այդ աշխատանքները հնարավոր է կիրառել միայն այն դեպքում, երբ մեր կազմակերպությունները ապահովեն կոլխոզնիկների և սովխոզների բանվորների ագրո-անգրագիտության վերացման գործը և մասսայականացնեն նրանց մեջ ագրո-ձեռնարկումները, բացատրեն և ցուցադրական աշխատանքներով ապացուցեն նրանց առավելությունները բերքատվության բարձրացման գործում:

Վերջինս հնարավոր է միայն արհեստական և տեղական պարարտացումն անցկացնելով, գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելով և ագրո ու զոո-մինիմումի գործնական կիրառումով:

Կասկած չկա, որ այս ամբողջ աշխատանքները պետք տարվեն սոցմրցման ու հարվածայնության միջոցով, գյուղ-արտադրական խորհրդակցությունների աշխատանքների աշխուժացման ու ուժեղացման հիման վրա:

## Կազմակերպչական աշխատանքներ

Կոլխոզներին և սովխոզներին կից ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջների կարևորագույն աշխատանքներից են կազմակերպչական աշխատանքները: Մանավանդ գյուղի աշխատանքների ներկայիս բարդ ու պատասխանատու շրջանում, երբ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ քանդվում են աշխատանքի ու տնտեսական հին ձևերը ու ավելի կարևոր տեղ են բռնում, ինչպես բոլոր կազմակերպությունների, այնպես էլ ՊԱՋԸ-Ավիաքիմի աշխատանքների մեջ: Որքան լավ, հստակ դրված լինեն կազմ-աշխատանքները, այնքան ավելի մեծ նվաճումներ կունենան ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջն իր աշխատանքների բոլոր բնագավառներում:



2244-Ջ
ՀԱՍՌ Арм.ССР

## Ինչպես պետք կազմակերպել Պաշտ-ավիոքիմի բջիջները կոլխոզներում յեվ սովխոզներում

ՊԱՋԸ–Ավիոքիմի շրջանային կազմակերպությունները նախքան կոլխոզում և սովխոզում բջիջ կազմելը, պետք է այնտեղ տանեն նախապատրաստական աշխատանքներ տեղի կոմ. և ԼԿՅԵՄ բջիջների միջոցով, ստեղծեն համապատասխան տրամադրություն բջիջ կազմակերպելու: Նախապատրաստական աշխատանքների համար պետք է լայն չափով օգտագործվեն այն կամպանիաները, վոր կուսակցությունը ՊԱՋԸ–Ավիոքիմի հետ միասին տանում ե ամեն տարի, ինչպես օրինակ՝ յերկրի պաշտպանության շաբաթ, Կարմիր բանակի տարեդարձը, հակաիմպերիալիստական օրը և այլն:

ՊԱՋԸ–Ավիոքիմի բջիջ կազմելու հող ստեղծելուց հետո, շրջանային կազմակերպությունները բջիջ կազմակերպելու համար, ուղարկում են իրենց հրահանգիչները: Հրահանգիչը ցանկացողների ընդհանուր ժողովում զեկուցում ե ՊԱՋԸ–Ավիոքիմի խնդիրների, անելիքների և անդամների պարտականությունների ու իրավունքների մասին:

Յեթե զեկուցումից հետո 10 հոգի ցանկություն են հայտնում և համապատասխան դիմում են ներկայացնում ՊԱՋԸ–Ավիոքիմի շարքերը մտնելու, ապա նրանցից կազմակերպվում ե բջիջ, վորը շրջանային և վերադաս օրգանների կողմից հաստատվելուց հետո, մտնում ե ՊԱՋԸ–Ավիոքիմի կազմակերպության ընդհանուր ցանցի մեջ:

Յեթե ցանկացողները 10–ից քիչ չեն, նրանց միացնում են մոտակա բջիջներից մեկին:



Բջիջները կազմակերպվում են արտադրական սկզբունքների հիման վրա՝ կոլխոզում, սովխոզում կամ նրանց օժանդակող ձեռնարկներին կից՝ արհեստանոցին կամ զանազան գործարաններին կից:

Այստեղ կազմակերպիչը պետք լուրջ ուշադրություն դարձնի ընդունվողների սոցիալական դրության վրա, կազմակերպության դասակարգային մաքրությունը պահպանելու համար, վորի մասին հետագայում ավելի մանրամասն կխոսենք:

ՊԱՋԸ–Ավիոքիմի բջիջ կազմակերպելու նախաձեռնությունն իրենց վրա կարող են վերցնել նաև տեղի (կոլխոզի, սովխոզի) կոմ. և ԼԿՅԵՄ բջիջները: Իսկ յեթե բջիջ կազմակերպում ե շրջանի հրահանգիչը, նա իր ամբողջ աշխատանքները պետք համաձայնեցնի տեղի վերոհիշյալ կազմակերպությունների հետ:

Այս ձևով բջիջը կազմակերպելուց ու հաստատվելուց հետո, անհրաժեշտ ե պարզաբանել այն հիմնական խնդիրներն ու իրավունքները, վոր ունի բջիջի ընդհանուր ժողովը:

Այդպիսիները հետևյալներն են՝ (տես ՊԱՋԸ–Ավիոքիմի կանոնադրությունը):

1. Բջիջի բարձրագույն օրգանը հանդիսանում ե նրա անդամների ընդհանուր ժողովը:

2. Ընդհանուր ժողովն ընտրում ե բջիջի ղեկավար օրգանները՝ բյուրո և վերստուգիչ հանձնաժողով:

3. Քննում ու հաստատում ե վերոհիշյալ օրգանների հաշվետվությունները իրենց աշխատանքների մասին:

4. Քննում ու հաստատում ե նրանց աշխատանքների ծրագիրը, ֆինանսական խնդիրներն ու նախահաշիվները:

5․ Լսում է սեկտորների կազմակերպիչների զեկուցումներն իրենց տարած աշխատանքների մասին։

6․ Մշակում է միջոցներ՝ բջիջի անդամների հասարակական դիսցիպլինան ապահովելու համար։

7․ Լսում և քննում է ՊԱԶԸ–Ավիոքիմի ընդհանուր խնդիրները և վերադաս օրգանների զեկուցումները։

8․ Կնքում է սոցիալիստական մրցման պայմանագրեր։

Բջիջի ընդհանուր ժողովներ հրավիրվում են վոչ ուշ, քան 3 ամիսը մեկ անգամ։

## Բյուրոյի վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները յեվ նրանց անելիքները

Ընդհանուր ժողովի հիմնական այս խնդիրները պարզաբանելուց հետո, անցնում են բջիջի ղեկավար օրգաններին՝ բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրություններին։

Ընտրական ժողովներն անց կացնելիս՝ անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալով․

ա) Այդ ժողովներին պետք ներկա լինեն բջիջի անդամների մեկ յերրորդից ավելին, հակառակ դեպքում ժողովի ընտրությունները օրինական համարվել չեն կարող։

բ) Բյուրոյի կազմը պետք ընտրել 3 մինչև 7 հոգի, ի նկատի ունենալով բջիջի անդամների քանակը, իսկ վերստուգիչ հանձնաժողովը՝ 3 անդամից, 2 թեկնածուից։

գ) Բյուրոն և վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է մի տարի ժամանակով։



դ) Բյուրոյի կազմի մեջ պետք ընտրել նախ և առաջ ռազմականապես միանգամայն հասուն, ակտիվ անդամներին, վորոնք յերկար ժամանակ մնալու յեն աշխատանքի վայրում։ Սեզոնային բանվորներին կամ ժամանակավորապես յեկած անդամներին, վորոնք վորոշ ժամանակից հետո հեռանալու յեն կոլխոզից կամ սովխոզից, նպատակահարմար է չընտրել՝ բջիջի բյուրոյի կազմը կայուն պահելու համար։

յե) Նախքան ղեկավարող կազմի ընտրությունը, անհրաժեշտ է բջիջի անդամներին բացատրել բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների անելիքները, վորպեսզի յուրաքանչյուրը լավ պատկերացնի նրանց անելիքները և ըստ այնմ ել ընտրի այնպիսիներին, վորոնք կարող են ապահովել բջիջի աշխույժ ու յեռանդուն աշխատանքը։

Վորո՞նք են ՊԱԶԸ–Ավիոքիմի բջիջի բյուրոյի հիմնական խնդիրները։ (Տես ՊԱԶԸ–Ավիոքիմի կանոնադրությունը)։

1․ Բջիջի ընդհանուր ժողովի բոլոր օրինական վորոշումների ճիշտ և ժամանակին կատարումը։

2․ Վերադաս օրգանների հրահանգների կատարումը։

3․ Աշխատանքի ծրագրի մշակումը՝ համաձայն վերոհիշյալ օրգանների վորոշման։

4․ Ընկերության անդամների քաղաքական դաստիարակության աշխատանքների ղեկավարումը, վորի համար անհրաժեշտ է, վոր բյուրոյի անդամներն իրենք առաջին հերթին քաղաքականապես զարգացած լինեն։

5․ Կապ հաստատել տեղի կոլխոզի կամ սովխոզի

կամ և ԼԿՅԵՄ բջիջների հետ, պրոֆեսիոնալ ու հասարակական այլ կազմակերպությունների հետ:

6. ՊԱՋԸ-Ավիոքիմի բջիջի բյուրոյի խնդիրների մեջ է մտնում նաև զինվորական պարապմունքները կանոնավորելու տեսակետից, հետևյալ նպատակների համար, բջիջի միջոցների ծախսումը՝

ա) Տիրը պատրաստելու, սարքավորելու և պահպանելու աշխատանքները:

բ) Զենքերի, փամփուշտների, նշանների և այլն մաքրելու պիտույքներ ձեռք բերելու:

գ) Հարկավոր դեպքում՝ ղեկավարներին վարձատրելու խնդիրը:

դ) Գրականության, պլակատներ և ագիտացիոն նյութեր գնելու հարցը:

ե) Ռազմական անկյունները սարքավորելու խնդիրը:

զ) Քիմիական հարձակումից պաշտպանվելու զգեստներ, հակագազեր և այլն, ձեռք բերելու գործը:

Վորո՞նք են ՊԱՋԸ-Ավիոքիմի վերստուգիչ հանձնաժողովի հիմնական խնդիրները (տես ՊԱՋԸ-Ավիոքիմի կանոնադրությունը):

1. Պարբերաբար ստուգել, թե ինչպես են բջիջի բյուրոն և սեկտորների ղեկավարները կյանքում կիրառում ՊԱՋԸ-Ավիոքիմի վերադաս օրգանների, նույնպես և բջիջի ընդհանուր ժողովների վորոշումները:

2. Քննել, ուսումնասիրել բջիջի բոլոր ընդգավառների աշխատանքները՝ նպատակ ունենալով վերացնելու թերությունները ու խեղաթյուրումները, յերևան հանելու բոլոր այն հնարավորությունները, վո-



րոնցով կարելի յե կարգավորել աշխատանքներն և ուժեղացնել նրանց տեմպերը՝ սոցիալիստական մրցման ու հարվածայնության լայն կիրառման հիման վրա, այդ խնդիրների շուրջն առաջադրելով կոնկրետ առաջարկություններ:

3. Հսկել, վոր ուսուցողական ծրագրերը՝ կազմվեն կանոնավոր և ժամանակին կատարվեն:

4. Պարբերաբար ստուգել ընկերության բջիջի դրամների ու միջոցների ծախսումը, ինչպես նաև հաշվետվական գրքերի ու գրությունն ու կանոնավոր վարելը:

5. Հսկել, վոր անդամավճարները ժամանակին ու ամբողջությամբ գանձվեն:

6. Վճռական պայքար տանել ընկերության միջոցների, ինչպես վատնումների ու յուրացումների, այնպես էլ վոչ նպատակահարմար ու անխնայողությամբ ծախսելու դեմ:

Բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի անդամների, այս բոլոր խնդիրների պարզաբանման հետ միասին, այդ ընտրական ժողովներում պետք մանրամասն բացատրել նաև ՊԱՋԸ-Ավիոքիմի կանոնադրության այն բոլոր կետերը, վորոնք վերաբերում են ընդհանուր ժողովներին, բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքներին: Այս անհրաժեշտ է անել այն տեսակետից, վոր ժողովականներից յուրաքանչյուրը լավ ըմբռնի այդ խնդիրները և ձայն տա ընտրվելու այնպիսի ընկերներին, վորոնք իսկապես կարող են ապահովել այդ աշխատանքները:

## Դ. Սեկտորների կազմակերպումը ու նրանց տեսակները

ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջի բյուրոյի ընտրությունից հետո, պետք հետևել, վոր բյուրոյի անդամները ճիշտ և նպատակահարմար ձևով բաժանեն աշխատանքները իրար մեջ:

Առաջին նիստում բյուրոն ընտրում է՝

1. Բջիջի պատասխանատու քարտուղար,

2. Գանձապահ,

3. Բջիջի աշխատանքների առանձին բնագավառների (սեկտորների) կազմակերպիչներ:

4. Կարելի յե ընտրել նաև տեխնիկական քարտուղար, այնուհետև բյուրոն անցնում է սեկտորների կազմակերպման:

Անհրաժեշտ է առնվազն կազմակերպել հետևյալ սեկտորները՝

1. Կազմակերպչական,

2. Ագիտացիոն,

3. Հրաձգային,

4. Ռազմական,

5. Գյուղատնտեսության քիմիացման:

Անպայման պետք է առաջադրել նաև կանանց՝ կոլխոզուհիների և սովխոզի բանվորուհիների մեջ աշխատող կնոջը:

Սեկտորների ստեղծելը սկզբունքեն պետք կապված լինի, բջիջի անդամների քանակի ու վորակի հետ: Մեծ սովխոզներում կամ կոլխոզներում, վորտեղ ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջի անդամները շատ են և վորակով էլ բարձր, կարելի յե լրացուցիչ կազմակերպել նաև ոդային-ավիացիոն և ռազմա-քիմիական պաշտպանության աշխատանքների համար առանձին սեկտոր: Յեթե կան համապատասխան հնարավորություններ (ուժեր, միջոցներ) ցանկալի յե կազմակերպել նաև առանձին սեկտորներ՝ յերիտասարդության և պատանիների մեջ աշխատելու համար:



Սեկտորների ղեկավարները պետք լինեն բջիջի բյուրոյի անդամները, իսկ յեթե նրանց թիվը քիչ է, կարելի յե առաջ քաշել բջիջի ակտիվ անդամներից այդ աշխատանքները ղեկավարելու համար:

Հրաձգային, ռազմական, գյուղատնտեսության քիմիացման սեկտորների աշխատանքների (տես Պաջը-Ավիաքիմի կանոնադրությունը) և այդ ուղղությամբ խմբակներ կազմակերպելու խնդիրների մասին, բրոշյուրի սկզբում ավելի մանրամասն խոսեցինք: Միայն պետք է ավելացնել, վոր խմբակների աշխատանքների համար պետք կազմել առանձին ծրագրեր կամ ավելի շուտ՝ պահանջել Պաջը-Ավիաքիմի վերադաս որգաններից, վորտեղ կան արդեն մշակված ծրագրեր:

Անհրաժեշտ ենք համարում բրոշյուրի վերջին մասը հատկացնել կազմակերպչական և ագիտացիոն սեկտորների աշխատանքներին, վորոնք կարեվորագույն նշանակություն ունեն Պաջը-Ավիաքիմի վողջ աշխատանքների համար:

### 5. Կազմակերպչական սեկտորի աշխատանքները.—

Կազմակերպչական սեկտորի աշխատանքները, վորը Պաջը-Ավիաքիմի բջիջի աշխատանքների կենտրոնական օղակներից մեկն է, պետք ամբողջապես հարմարեցված լինի տեղական պայմաններին, և բխի տեղի հասարակական հարաբերություններից:

Գաջր-Ալիքաքիմի բջիջը միշտ պիտի հաշվի առնի դասակարգային պայքարը և իր աշխատանքները դասավորի այն ձևով, որ որքան կարելի է ներս համախմբի իր շուրջը կոլտնտեսական, չքավոր ու միջակ մասսաներին և ավելի կազմակերպված ու միակամորեն տանի պայքարը կուլակի դեմ:

Բացի այդ, բջիջը չպետք է մոռանա իր շրջապատը, որ նա դեռ աշխատում է գյուղացիական մանր–բուրժուական շրջապատում, որ չքավորներն ու մանավանդ միջակները, նույնիսկ կոլտնտեսականները, դեռ բոլորովին չեն ազատվել մանր սեփականատիրական իդեոլոգիայից, երբեմն կարևոր կրոնական նախապաշարմունքներից (մանավանդ ազգային փոքրամասնությունների մեջ) և այլն:

Բջիջը պիտի ի նկատի ունենա, որ սովխոզի բանվորների մեջ դեռ շատ կան այնպիսիները, որոնց աշխատանքը խորհրդային գյուղատնտեսական գործարաններում ժամանակավոր սեզոնային բնույթ են կրում, այդ բանվորների որոշ մասը դեռ կապված է գյուղի, նրա հասարակական կառուցվածքի հետ, որ նրանք սովխոզում աշխատում են իրենց անհատական տնտեսությունը բարձրացնելու համար և այլն:

Բջիջը պիտի լավ իմանա, որ նույն կոլխոզում դեռ շարունակվում է դասակարգային պայքարը: (Ի հարկե, այլ կերպ, այլ պայմաններում, քան կոլխոզից դուրս), որ երբեմն կուլակի ագենտները, ներս են խծկվում կոլխոզ, նրան ներսից պայթեցնելու, կամ երբեմն նրանք ժամանակավորապես ակտիվ կերպով աշխատում են կոլտնտեսականների համակրանքը և վստահությունը ձեռք բերելու և ակտիվիստ կոչումը



ստանալու, հետագայում օգտագործելու այն՝ հենց նույն կոլխոզի դեմ, նրան պայթեցնելու համար:

Ահա այս բոլոր պայմանները պիտի լավ հաշվի առնի կոլխոզի և սովխոզի Գաջր-Ալիքաքիմի բջիջը, նրա կազմակերպչական սեկտորը և այնպես դասավորի իր աշխատանքը, որ ավելի ամրացնի կոլխոզը ու արմատախիլ անի դասակարգային թշնամու բոլոր դավադրությունները:

Դրա համար անհրաժեշտ է, որ նա իր կազմակերպչական ձեռնարկումներով ուժեղ կապվի բատրակ, չքավոր, միջակ մասսայի և գյուղատնտեսական բանվորների հետ:

Բջիջը իր աշխատանքների հենարանը պիտի դարձնի բատրակա–չքավորական խմբակները, կապ հաստատի տեղի կոմուն. և կոմյերիտական բջիջների հետ:

Գաջր-Ալիքաքիմի բջիջը այդ բատրակա–չքավորական կազմակերպության միջոցով պիտի ծավալի իր աշխատանքները կոլխոզն և սովխոզը շրջապատող անհատական չքավոր ու միջակ տնտեսությունների մեջ, նրանց կազմակերպի խորհրդային երկրի պաշտպանության գործի համար և հող պատրաստի այնտեղ էլ ստեղծելու Գաջր-Ալիքաքիմի կազմակերպություններ, կամ նրանց էլ գրավելու իր շարքերը:

## 1. Կազմակերպության սոցիալական կազմի կարգավորումը.

Գաջր-Ալիքաքիմի կազմ. սեկտորի առաջնակարգ խնդիրներից մեկն էլ կազմակերպության աճման ու սոցիալական կազմի կարգավորման խնդիրն է:

Պիտի ասել, որ աշխատանքի այս կողմի վրա հարկավոր ուշադրություն չի դարձվում:

Զաքր Ավիաքիմի կազմակերպությունները կոլխոզնիկների ու սովխոզի բանվորների մեջ՝ նրանց ընկերության շարքերը գրավելու ուղղությամբ համապատասխան աշխատանք տանելու հետ միասին, պետք է աշալուրջ լինեն յուրաքանչյուր նոր ընդունվողի վերաբերմամբ:

Զաքր-Ավիաքիմի կազմակերպությունները նոր բջիջներ ստեղծելիս՝ կամ յեղած բջիջներում նոր անդամներ ընդունելիս, պետք խիստ հետևեն, վորպեսզի չխախտեն կազմակերպության սոցիալական մաքրությունը:

Նոր անդամներ ընդունելիս՝ պետք է ղեկավարվել հետևյալով.—

1. Բոլոր ձայնազուրկները, կուլակները, քրեական կոդեքսով իրավունքից զրկվածները՝ ինչպես նաև նրանց զավակներն ու նրանց խնամքի տակ յեղածները, յերբեք չեն կարող լինել ընկերության անդամներ:

2. Մինչև 14 տարեկան հասակ ունեցողները նույնպես չեն կարող լինել ընկերության անդամներ: Նրանց պետք է կազմակերպել «Զաքր-Ավիաքիմի բարեկամների» խմբակի մեջ:

3. Ընկերության մեջ ընդունվողները պետք է լինեն կոլխոզի չքավոր ու միջակ լավագույն ակտիվ տարրերից ու սովխոզի ակտիվ բանվորներից:

Ասել, վոր բոլոր կոլտնտեսականներին կարելի յե և պետք է ընդունել ընկերության մեջ, առանց ջոկելու նրանցից լավերին, միանգամայն սխալ է: Յերբեմն լինում են նման հակաճառություններ, թե յեթե նա կոլխոզի անդամ է, պետք է նրան անպայման, նույնիսկ առանց ստուգելու ընդունել Զաքր-Ավիաքիմի մեջ, վորովհետև կոլեկտիվ տնտեսության մեջ ընդունվելիս՝



ստուգվել է, կամ թե նա խորհրդային տնտեսության բանվոր է և այլն:

Այս հակաճառությունները անպայման ճիշտ չեն, վորովհետև փորձը ցույց է տվել, վոր կոլխոզներում յերբեմն պատահում են դասակարգային անհարազատ տարրեր:

Մենք ունենք շատ օրինակներ, յերբ կուլակները, հոգևորականները կամ հաճախ նրանց զավակները՝ իրենց կաշին փրկելու համար դառնում են «բանվորներ», մանավանդ «սեզոնային բանվորներ», կամ զանազան խարդախ միջոցներով խցկվում են կոլեկտիվ տնտեսություններ և այլն:

Պարզ է, վոր Զաքր-Ավիաքիմի բջիջը, նոր անդամներ ընդունելիս՝ պետք է լավ ուսումնասիրի յուրաքանչյուրին և թույլ չտա, վոր դասակարգային թշնամին, կամ նրա ագենտները սպրդեն իր շարքերը և խանգարեն աշխատանքները:

Զաքր-Ավիաքիմի աճման բացերից մեկն էլ այն է, վոր մեր կազմակերպությունները հաճախ կազմակերպվորեն չեն ամրացնում այն նվաճումներն ու արդյունքները, վոր մենք ունենում ենք ագիտ-պրոպ աշխատանքների ասպարեզում:

Կարելի յե բերել շատ օրինակներ, յերբ Զաքր-Ավիաքիմի գծով մասսայական կամպանիաներ կամ դեկուցումներ անցկացնելուց հետո, մենք անմիջապես ընդունելություններ չենք կատարում ընկերության մեջ հենց այդ ժողովներում, չնայած նրան, վոր ցանկացողներ ու դիմողներ շատ են լինում:

Պետք է նման ժողովները, կամ յերկրի պաշտպանության շուրջը դրված դեկուցումները կամ խմբակա-

յին պարապմունքները լայն չափով օգտագործել և այդ ժողովներից ու պարապմունքներից անմիջապես հետո, հարցման կարգով ցուցադրել և կազմակերպության մեջ ընդունել ցանկացողներին, իհարկե համապատասխան ստուգման ենթարկելով նրա սոցիալական դրությունը:

Ընդունման, մուտքի վճարի գանձման, փոքր խմբակային ամրացման, անդամատոմս տալու և այլն ձևականությունները պետք աշխատել կատարել արագ, առանց ձգձգումների, որպեսզի ընդունվող կոլխոզնիկը, բանվորը կամ սովխոզի բանվորը,—տեսնելով ռեալ արդյունքները՝ ավելի լավ կպչի աշխատանքի ու ամբողջապես ներգրավվի կազմակերպության մեջ:

## 2. Պաշը-Ավիաքիմի բջիջային աշխատանքը պետք լինի ծրագրված ու բովանդակալից.

Կազմ-սեկտորի ամենակարևոր աշխատանքներից մեկն է, Պաշը-Ավիաքիմի կազմակերպության աշխատանքների պլանավորված տանելու խնդիրն է:

Յուրաքանչյուր վեց ամիս մեկ անգամ բջիջը պետք կազմի իր աշխատանքների ծրագիրը:

Ծրագիրը պետք նախնական լայն քննության ենթարկվի բջջի, սեկտորների կողմից և հաստատվելուց հետո դառնա ամբողջ աշխատանքի ուղեցույցը:

Բջիջն իր աշխատանքները պետք տանի համաձայն այդ ծրագրի, շեղումներ կարող են լինել միայն այն դեպքում, երբ նոր քաղաքական անցքեր տեղի ունենան, երբ բջիջը ստիպված լինի զբաղվել պլանից դուրս այդ խնդիրներով:

Աշխատանքների ծրագրերը պետք կազմված լինեն կոնկրետ, օրացուցային ձևով: Պետք ամեն կերպ աշխատել խուսափել ընդհանուր շաբլոն կետերից, որոնք



շարունակ, բոլոր ծրագրերում էլ պարբերաբար կրկնվում են:

Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ պետք նշանակել մի ընկերոջ և նրան պատասխանատու դարձնել այդ խնդրի համար:

Բջջի աշխատանքների ծրագիրը պետք հարմարեցված լինի տեղական պայմաններին և բխի Պաշը-Ավիաքիմի առաջ կանգնած անմիջական խնդիրներից ու վերադաս օրգանների դիրեկտիվներից:

Աշխատանքի ծրագիրը բջջում քննելուց և հաստատելուց հետո, պետք ուղարկել Պաշը-Ավիաքիմի շրջանային օրգանին:

Աշխատանքի ծրագիրը կազմելիս՝ պետք ելնել այն դրությունից, որ բջջային աշխատանքների բովանդակությունը լինի հետաքրքիր և բոլոր անդամներին կապի այդ աշխատանքների հետ:

Բջջի բոլոր անդամների համար նույնպես պետք հետաքրքիր դարձնել բջջի բոլոր ժողովներն ու նրանց օրակարգի հարցերը:

Ընդհանուր ժողովից մի քանի օր առաջ, բջջի բյուրոն պետք հայտարարի ժողովի օրակարգը, այնպես, որ, յուրաքանչյուր կոլտնտեսական և խորհրդային տնտեսության բանվոր՝ լինի նա Պաշը-Ավիաքիմի անդամ, թե ոչ՝ իմանա օրակարգի հարցերը, որպեսզի հնարավորություն ունենա պատրաստելու այն հարցերը, որը նա ուզում է դնել ընդհանուր ժողովի առաջ:

Բջջի ընդհանուր ժողովները պետք հրավիրվեն այնպիսի օրեր, երբ բոլոր կոլխոզնիկները և սովխոզի բանվորներն ազատ են: Ավելի լավ է հրավիրել հանգստի օրերին:

Բջիջի, ինչպես բոլոր աշխատանքները, այնպես էլ մասսայական, ընդհանուր ժողովները պիտի տանել ինքնաքննադատության լայն կիրառման լոզունգի տակ: Բջիջի բյուրոն և ղեկավար ընկերները պիտի քաջալերեն ժողովականների առողջ քննադատությունը՝ ինչպես ընդհանուր աշխատանքների, այնպես էլ առանձին ընկերների վերաբերմամբ: Աշխատանքի այս մեթոդը մեծապես կհանդիսանա բջիջի անդամների ինքնագործունեության և յուրաքանչյուրի նախաձեռնության զարգացման ու նրանց պատասխանատվության բարձրացման ասպարեզում:

Աշխատանքի նման կազմակերպումը կհեշտացնի և Գաջը–Ավլաքիմի աշխատանքների հետ կկապի ոչ միայն նրա անդամներին, այլ և կազմակերպությանը կից գտնված կոլտնտեսականներին ու ասպիրանտներին:

Կազմած ծրագրի ժամանակաշրջանն անցնելուց հետո, այսինքն՝ 6 ամիսը մեկ անգամ պետք է ընդհանուր ժողովում լսել բջիջի բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները:

Գլխավոր խնդիրը նրանում է, որ լավ կազմակերպվի այդ ժողովը, ինչպես որակապես, այնպես էլ զեկուցման թեզիսները վաղօրոք հայտնվեն ընկերության անդամներին, ավելի լավ է, տպագրվեն պատի թերթում:

Հայտարարված այդ թեզիսները պիտի պարունակեն իրենց մեջ մի շարք թվական տվյալներ բջիջի աշխատանքների մասին, առանձին ակտիվ ընկերների մասին, նույնիսկ հայտարարվեն նրանց անունները:

Զեկուցումներում պիտի հիշատակվի անդամավճարների գանձումը, չվճարողների ազգանունները, հա-



սարակական աշխատանքների ծավալը ու մասսաների մասնակցությունն այդ աշխատանքներում:

Բյուրոյի զեկուցման հիմնական խնդիրը պիտի հանդիսանա, թե ինչ է արել կազմակերպությունն յերկրի պաշտպանության ամրացման համար, ինչպես է կապվել այդ ասպարեզում կոլեկտիվ և խորհրդային անտեսությունների մյուս հասարակական կազմակերպությունների հետ: Պրոֆեսիոնալ, կոմյերիտական, կուլտուրական և այլն ու ինչպես են օգնել Գաջը–Ավլաքիմի աշխատանքներին վերոհիշյալ կազմակերպությունները:

Գաջը–Ավլաքիմի ընդհանուր ժողովները, իհարկե, կանոն, պիտի հրավիրվեն դռնբաց: Բյուրոն պիտի բոլոր միջոցները ձեռք առնի, որպեսզի նման ժողովներին, որքան կարելի յե շատ մասնակցեն ոչ միայն ընկերության անդամները, այլև ոչ անդամները:

Առանձնապես պիտի ուշադրություն դարձնել, որպեսզի այդ ժողովներին ապահովված լինի կանանց մասնակցությունը:

### 3. Կադրերի պատրաստումն ու առաջ քաշումները.

Գաջը–Ավլաքիմի բջիջի կազմ-սեկտորի գլխավոր աշխատանքներից մեկն էլ հանդիսանում է ընկերության աշխատանքների համար կադրեր պատրաստելու ու նրանց ղեկավար աշխատանքների առաջ քաշելու խնդիրը:

Ինչ ձևով և ինչ միջոցներով է, որ այդ կադրերը պիտի պատրաստվեն:

Կադրեր պատրաստելու հիմնական միջոցը, դա Գաջը–Ավլաքիմի բջիջի աշխատանքների բաժանումն է բոլոր անդամների միջև:

Կազմ-սեկտորը բջիջի աշխատանքներն այնպես պիտի պլանավորի, վոր ընկերության վոչ մի անդամ չմնա առանց Պաջը-Ակիլաքիմի պարտականությունների:

Այդ պարտականությունները կարող են լինել հետևյալները՝ անդամավճարների գանձումը, խրճիթ-ընթերցարաններին կից Պաջը-Ակիլաքիմի անկյուններ կազմակերպելը, նոր անդամներ գրավելը, գրագիտության տարածումը, խմբակների ղեկավարելը, ճշգրտակցությունը, կապը շեֆի հետ, վերադաս որգանների հետ և այլն: Այսպիսի աշխատանքներ շատ կան Պաջը-Ակիլաքիմի բջիջի ներսում, մանավանդ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններին կից:

Աշխատանքի բաժանումը կատարելիս՝ պիտի ղեկավարվել նրանով, վոր յուրաքանչյուրին տրվի այնպիսի աշխատանք, վոր ինքն է ցանկանում և վորով ավելի շատ է հետաքրքրվում տվյալ ընկերը: Այս ձևը կապահովի աշխատանքների արդյունավետությունը:

Կազմ-սեկտորը, աշխատանքի բաժանումից հետո պիտի հետևի, թե յուրաքանչյուր ընկեր ինչպես է կատարում իր վրա դրված պարտականությունները, ղեկավարի նրանց աշխատանքը և օգնի դժվարություններին: Լավ կլինի, վոր նրանց համար պարբերաբար կազմակերպվեն զրույցներ:

Ահա աշխատանքի լծված այդ ընկերներն են, վորոնք ժամանակի ընթացքում, գործնականում սովորեն ձեռք կբերեն աշխատանքի փորձ, վորը ժամանակի ընթացքում կլայնանա և նրանք կդառնան Պաջը-Ակիլաքիմի ակտիվ ու բազմաղույն կադրերը:

Կազմ-սեկտորը պիտի շարունակ ուսումնասիրի նրանց տարած աշխատանքի վորակը և նրանցից ավելի ընդունակներին, վորոնք սիրում են իրենց աշխատանքը



և բարեխիղճ կերպով տանում, առաջ քաշի ավելի պատասխանատու աշխատանքի:

Այս կամ այն ասպարեզում առաջքաշված ընկերների համար պետք է հաճախ կազմակերպել խորհրդակցություններ, հաշվի առնելու, ի մի գումարելու նրանց աշխատանքները, ուսումնասիրելու յուրաքանչյուրի փորձը, անհրաժեշտ դեպքում՝ տեղափոխելու այդ փորձը, նրանց հետ կազմելու աշխատանքների ծրագրերն և այլն:

Պարբերական այս խորհրդակցությունները մեծ չափով կնպաստեն նրանց հետագա աշխատանքների ծավալմանը և խոշոր խթան կհանդիսանան այդ կադրերի աճեցման ու պատրաստման տեսակետից:

Այդ խորհրդակցությունների նպատակը պիտի լինի նաև տեսականորեն պատրաստել ու կոփել յեղած կադրերը:

## 4. Բջիջի և նրա անդամների աշխատանքների հաշվառում.

Պաջը-Ակիլաքիմի կազմ-սեկտորի աշխատանքներից մեկն էլ՝ անդամների ու աշխատանքների հաշվառման և ինֆորմացիայի կարգավորման գործն է:

Այս աշխատանքները պիտի տանել հետևյալ ձևով: Նախ և առաջ պիտի կարգավորել բջիջի անդամների և նրանց կատարած աշխատանքների հաշվառումը:

Բջիջի անդամների հաշվառման համար սահմանված է հատուկ հաշվառման քարտ, վորը լցվում է բջիջի յուրաքանչյուր անդամի համար:

Հաշվառման քարտում գրվում է բջիջի անդամի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, նշանակ-

վում են անդամավճարի մուծումները, Պաջը-Ավիաքիմի ուղղությամբ ունեցած պատրաստակամությունը և բջիջում տարած ակտիվ աշխատանքը: Բացի այդ, մտցրված են մի շարք քարտեր և տետրներ, վորտեղ հաշվի չեն առնվում Պաջը—Ավիաքիմի յուրաքանչյուր անդամի տարած գործնական աշխատանքները:

Բջիջի աշխատանքների հաշվառման համար առանձին ձևեր կամ քարտեր չեն սահմանված: Բջիջն իր աշխատանքների հաշվառման համար կազմակերպում է «Հուշատետր», վորտեղ ամեն անգամ արձանագրվում են կատարված աշխատանքները, զեկուցումները, դասախոսությունները, խմբակային պարապմունքները, ընդհանուր ժողովները և այլն:

Բջիջի հաշվետվությունը վերադաս օրգանների առաջ կայանում է նրանում, վոր նա սահմանված ժամանակամիջոցում ներկայացնում է վիճակագրական տեղեկություններ և նրա հետ կարճ ինֆորմացիոն նամակ: Ինֆորմացիոն նամակի մեջ պիտի բացատրել նաև վիճակագրական այդ տվյալները, յերկրորդ՝ կարճ, կերպով հաղորդել տարված աշխատանքները և յերրորդ՝ առաջադրել այն խնդիրները, վորոնց վերաբերմամբ բջիջը կարիք ունի վերադաս օրգանների բացատրության:

Բջիջի և անդամների աշխատանքների հաշվառման ու նրա մասին ժամանակին վերադաս օրգաններին տեղյակ պահելու կարևորությունը, պարզ է բոլորի համար, միայն պետք է շեշտել, վոր կազմսեկտորները պիտի կանոնավորեն այդ աշխատանքը, վորպեսզի ՊԱՋԸ-Ավիաքիմի շրջանային և կենտրոնական կազմակերպությունները կարողանան ժամանակին և հարկավոր ղեկավարությունը ցույց տալ նրանց աշխատանքներին:



Կոլխոզներին և սովխոզներին կից ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջները սահմանված ձևի հաշվառման, վիճակագրական քարտեր և ինֆորմացիայի ձևեր կարող են ստանալ համապատասխան շրջանային կազմակերպություններից:

## 5. Կապը կոլխոզի յեվ սովխոզի մյուս քաղաքական, հասարակական կազմակերպությունների հետ

ՊԱՋԸ-Ավիաքիմի բջիջի կազմ-սեկտորի ֆունկցիաների մեջ է մտնում նաև կապ հաստատել կոլխոզի և սովխոզի մյուս քաղաքական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Կոմունիստական, ԼԿՅԵՄ, ՄՕՊՐ-ի բջիջները, «Կորչի անգրագիտությունը» Ընկերությունը և այլն:

Առաջին յերկու կազմակերպությունների հետ կապը պիտի տարվի այն ուղղությամբ, վորպեսզի ապահովվի այդ կազմակերպությունների ղեկավարությունը, մանավանդ կոմբջիջի, ՊԱՋԸ-Ավիաքիմի վրա:

Մյուս կողմից ՊԱՋԸ—Ավիաքիմի կազմակերպության հիմնական նպատակը լինելով յերկրի պաշտպանության գործը՝ իր մեջ պիտի կոփի ու պատրաստի այնպիսի կադրեր, վորոնք բացի խորհուրդների յերկրի պաշտպանության գործից, լինեն նաև սոցիալիստական վերակառուցման մարտիկներ և սովխոզների ու կոլխոզների աշխատանքներն ամրացնողներ: ՊԱՋԸ-Ավիաքիմի այդպիսի լավագույն կադրերը պիտի հանդիսանան նաև այն ուժերը, վորոնք պիտի օգնեն կուսակցության ու Կոմյերիտմիության իրենց աշխատանքներում և անցնեն նրանց շարքերը:

Անհրաժեշտ է այդ կադրերին վոչ միայն ընդգրկել

կուսաշարքերը, այլև նրանց լայն շարքով մասնակից անել սոցիալիստական մրցման ու հարվածայնության աշխատանքներին: Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ՊԱՇՏ-Ավիաքիմ բջիջների կարևորագույն լոզունգներից մեկը պիտի լինի «վոչ մի անդամ դուրս չմնա սոցմրցումից և հարվածային բրիգադներից»:

Հասարակական մյուս կազմակերպությունների հետ ՄՕՊՐ, «Կորչի անգրագիտությունը» և այլն կազմակերպությունների հետ, կապը պիտի ուժեղացնել փոխադարձ ներկայացուցչությունների միջոցով. փոխադարձաբար օգնելով աշխատանքներին, մանավանդ «ԿԱՆ»-ի հետ, վճռական միջոցներ ձեռք առնելով վերացնելու անգրագիտությունը և կիսագրագիտությունը կոլխոզնիկների և սովխոզի բանվորների մեջ: Այդ տեսակետով «ՊԱՇՏ-Ավիաքիմի անդամների մեջ չկա և չպետք է լինեն անգրագետներ» լոզունգը պիտի ամբողջովին կիրառվի:

## 6. Բջիջի ֆինանսական միջոցներ

Այս աշխատանքի վրա նույնպես կազմ-սեկտորը պիտի լուրջ ուշադրություն դարձնի, բջիջի ֆինանսական միջոցների առաջին աղբյուրը պիտի կազմեն անդամավճարները, վորոնց ձգձգումները պիտի վերջնականապես կարգավորել: Դրա համար բջիջը, անդամների շատության դեպքում՝ բացի գանձապահից, ընտրում է նաև ընկերության ամեն 10 անդամին մեկ գանձող: Բջիջի գանձապահը շարունակ պիտի հետևի գանձողների աշխատանքներին, ղեկավարի նրանց աշխատանքները և ինքն էլ պարբերաբար հաշիվ ներկայացնի բջիջի վերստուգիչ հանձնաժողովներին:



Անդամավճարների նույնիսկ ամենալավ գանձման դեպքում՝ ապահովել բջիջի բոլոր ծախսերը հնարավոր չի: Անհրաժեշտ պիտի մտածել ուրիշ յեկամուտների մասին:

Ուրիշ յեկամուտների մեջ պիտի մտնեն այն մասնակի տոկոսները, վոր բջիջը ստանում է «ախր»-ից և էլ այլ ձեռնարկումներից:

Բջիջն իր ֆինանսական միջոցներն ուժեղացնելու համար, յեթե հնարավոր է, յերբեմն պիտի կազմակերպի ուժերով վճարովի յերեկույթներ, ներկայացումներ և կինո-սեանսներ:

Ընկերության գրականության ու ժուռնալների տարածումը նույնպես հնարավորություն կտան ուժեղացնելու բջիջի միջոցները:

Պաշտ-Ավիաքիմի բջիջի յեկամուտների լայնացման կարևոր միջոցներից մեկն էլ «Պաշտ-Ավիաքիմի հեկտար»-ի և «Պաշտպանության Հեկտար»-ի կազմակերպման գործն է: Այդ աշխատանքը մեզ մոտ նոր է, բայց կան բոլոր կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում շատ հողեր, վորոնք մշակման չեն յենթարկվում, քարոտ կամ թունավոր խոտերով պատված լինելու հետևանքով: Բջիջը կարող է կոլեկտիվ և խորհրդային տնտեսության վարչությունների միջոցով վերցնի այդպիսի մի հողամաս, մաքրի նրան քարերից, անպետք խոտերից ու բջիջի անդամների միջոցով մշակի և ստացած ամբողջ յեկամուտը հատկացնի ընկերության օգտին: Ահա այդ ձևով մշակած դաշտերը կոչվում են «Պաշտ-Ավիաքիմի Հեկտար» կամ «Պաշտպանության Հեկտար»- բացի նրանից, վոր այս ձեռնարկումներն ավելացնում են բջիջի ֆինանսական միջոցները, նրանք միաժամանակ ուժեղացնում են նաև Պաշտ-Ավիաքիմի

գյուղատնտեսական աշխատանքները և մշակության մեջ գնում նոր, մինչև հիմի չմշակված հողամասերը:

## Ագիտպրոպ աշխատանքներ

Կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների Պաջը-Ավիաքիմի բջիջներին կից, նրա ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքները ղեկավարելու համար կազմակերպվում է նաև ագիտացիոն սեկտոր:

Ագիտ-սեկտորն իր աշխատանքներով կապված լինելով Պաջը—Ավիաքիմի անդամների դաստիարակության խնդիրների հետ՝ հանդիսանում է բջջի կարևոր սեկցիաներից մեկը: Սակայն, յեթե ուսումնասիրելու լինենք նրա դրությունը, կտեսնենք, վոր նա շատ հեռու յե բավարար լինելուց: Յեթե, նույնիսկ մենք վերցնելու լինենք Պաջը—Ավիաքիմի շրջանային կազմակերպությունները՝ կտեսնենք, վոր այդ ասպարեզում այնտեղ ևս չափազանց վատ են դրված աշխատանքները, ուր մնաց գյուղական բջիջները, վորտեղ ամբողջապես կաղում են այդ աշխատանքները և մեծ մասամբ զուրկ են, ինչպես սեկտորներից, այնպես էլ պրոպագանդիստներից և ագիտատորներից:

Պաջը-Ավիաքիմի համամիութենական 2-րդ համագումարը հաստատեց, վոր ագիտ-պրոպ աշխատանքների ասպարեզում մենք համարյա թե ամեն տեղ, ունենք այդ աշխատանքների թերագնահատում, մեր բջիջները տեղերում պետք է լուրջ պայքարեն բոլոր նրանց դեմ, վորոնք թերագնահատում են այդ աշխատանքները և ստեղծեն բոլոր նախապայմանները թարմացնելու ու աշխուժացնելու այն:



Ագիտ-պրոպ աշխատանքների հիմնական խնդիրները հետևյալներն են՝

### 1. Ուսումնասիրել հիմնական քաղաքական խնդիրները

Պատերազմի վտանգի, խաղաղության համար մեր պայքարի և խորհուրդների յերկրի պաշտպանության խնդիրներն են, վորոնք պիտի Պաջը-Ավիաքիմի բջիջների ագիտ-պրոպ աշխատանքների բովանդակության կազմեն: Այս խնդրի շուրջն է, վոր պիտի կոփվեն ու պատրաստվեն ՊԱՋԸ-Ավիաքիմի միլիոնավոր անդամները՝ մեր յերկիրը պաշտպանելու համար:

Սրա հետ միասին, պիտի խորը ուսումնասիրել խոշորագույն աշխատանքների հնգամյակը, մեր յերկրի սոցիալիստական շինարարության խնդիրները, կոլխոզշարժումը, համատարած կոլեկտիվացումը և նրա հիման վրա կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը: Պաջը—Ավիաքիմի բջիջները՝ մանավանդ կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները, առանձնապես պիտի ուսումնասիրեն մեր ընկերության հնգամյա փայլուն պլանը և պիտի բոլոր միջոցները ձեռնարկեն նրա իրագործման համար: Ագիտ-պրոպ աշխատանքների կարևորագույն խնդիրը պետք է լինի՝ մշակել, վերլուծել «հնգամյակը չորս տարում» լոզունգը և գործնական աշխատանքները տանել՝ կյանքում իրագործելու համար:

Այս ամբողջ աշխատանքներին պիտի տրվի ամենալայն մասսայական բնույթ՝ սոցիալիստական մրցման և հարվածայնության նշանաբանի տակ: Այդ աշխատանքներում պիտի դաստիարակվեն ու աճեն մեր յերկրի պաշտպանող կադրերը: Այս աշխատանքների միջոցով

պիտի բարձրացնել նրանց քաղաքական պատրաստականությունն ու գիտակցությունը: Այս աշխատանքների միջոցով պիտի նրանց դարձնել սոցիալիստական յերկրի հասարակական գործիչներ՝ և գյուղի սոցիալիստական սեկտորի մարտիկներ:

## 2. Ուսումնասիրել կարմիր բանակի փայլուն պատմությունը

ՊԱՋԸ-Ավիաքիմի ագիտ-պրոպ աշխատանքների հիմնական հարցերից մեկն էլ Կարմիր բանակի փայլուն պատմությունն ուսումնասիրելու խնդիրն է:

Այս աշխատանքները պիտի տանեն կոլտնտեսականներին և սովխոզի բանվորներին հոկտեմբերյան հեղափոխության հիմնական խնդիրների ու բանվորագյուղացիական Կարմիր բանակի կազմակերպելու անհրաժեշտության հետ ծանոթացնելու ուղղությամբ:

Անհրաժեշտ է լայն չափով մասսայականացնել քաղաքացիական պատերազմների պատճառները և Կարմիր բանակի փայլուն հաղթանակները՝ մանրամասն մշակելով առանձին կռիվներ, ճակատամարտեր, վորոնք Պաջը-Ավիաքիմի բջիջի անդամներին ռազմական գիտելիքների հետ ծանոթացնելու տեսակետից կարևոր նշանակություն ունեն: Այնուհետև ուսումնասիրել Կարմիր բանակը խաղաղ պայմաններում, նրա շինարարական, տնտեսագործական աշխատանքները՝ դիսցիպլինայի հարցեր և այլն:

Վերոհիշյալ բոլոր խնդիրներում մեծ օգնություն կարող են և պիտի հասցնեն Պաջը-Ավիաքիմի հրատարակությունները ու համապատասխան գրականությունը, վորը պիտի մաքսիմալ չափով տարածել ընկերության անդամների մեջը:



## 3. Պարզաբանել Պաջ-ավիաքիմի անդամների պարտականություններն ու իրավունքները

Պաջը-Ավիաքիմի բջիջները ագիտ-պրոպ աշխատանքների գծով պիտի հիմնականորեն ուսումնասիրեն յուրաքանչյուր անդամի պարտականություններն ու իրավունքները:

Այդ անհրաժեշտ է նրա համար, վոր բջիջի անդամները ծանոթ լինեն իրենց իրավունքների և իրենց վրա ընկնող խնդիրների հետ, վորպեսզի հետագայում չառաջանան չանդրադառնան այդ խնդիրներին, զանազան պատճառաբանություններ չբերեն, թե մենք չգիտեինք, կամ չեյինք իմանում, վոր մեզ վրա, իբրև Պաջը-Ավիաքիմի բջիջի անդամների վրա, ընկնում է այս պարտականությունները:

Ընկերության անդամների պարտականությունները պարզաբանելիս՝ պիտի սրել հետևյալ հարցերը, վոր Պաջը-Ավիաքիմի անդամը պարտավոր է՝ պարբերաբար մուծել իր համար սահմանված անդամավճարները, լինել ագիտատոր Խորհրդային յերկրի պաշտպանության համար, ագիտացիա մղել, վոր բանվորները, կոլտնտեսականները, չքավոր ու միջակ գյուղացիները մտնեն Պաջը-Ավիաքիմի շարքերը, օգնեն ընկերությանն ու նրա բջիջին՝ ուժեղացնելու նրանց ֆինանսական միջոցները և կատարեն Պաջը-Ավիաքիմի բջիջի կամ նրա վերադաս բոլոր օրգանների կողմից նրա վրա դրված բոլոր հանձնարարություններն ու պարտականությունները, յելնելով նրանից, վոր «չկա Պաջը-Ավիաքիմի անդամ, առանց ընկերության պարտականությունների»: Պաջը-Ավիաքիմի յուրաքանչյուր անդամ պարտավոր է մասնակցել բջիջի ընդհանուր ժողովներին և խմբակային

պարապմունքներին: Եթե նա ընտրվում է ընկերության ղեկավար օրգանների մեջ՝ պարտավոր է մասնակցել նրա բոլոր աշխատանքներին:

Պաջը–Ավիոքիմի անդամ կոլտնտեսական կամ սովխոզի բանվորը պետք է լինի ակտիվ հասարակական աշխատող, ամենաառաջիններից իր տնտեսության մեջ, կոլխոզում կամ սովխոզում, դաշտային կամ այլ աշխատանքների ժամանակ օրինակ տվող, մեքենաների կամ անասունների ամենալավ խնամողը, դպրոցում կամ կուրսերում՝ առաջնակարգ ուսանողը:

Առանձնապես կարևոր է, որ ընկերության անդամը զբաղվի ինքնազարգացողությամբ, խորացնի իր գիտելիքները զինվորական, ավիացիայի, քիմիայի և այլ գիտությունների ասպարեզում: Եթե բջիջի անդամը ցուցակագրվում է մասնակցելու մի որևէ խմբակի պարապմունքներին, նա պարտավոր է կանոնավոր և ժամանակին հաճախել խմբակի պարապմունքներին: Այդ ասպարեզում աշխատանքի փորձը մեզ ցույց է տալիս, որ սկզբում համարյա բոլորն էլ ցուցակագրվում են խմբակին, բայց մի յերկու պարապմունքից հետո այլևս ոչ ոք չի մնում խմբակի մեջ: Կամ յերբեմն մեկը ցուցակագրվում է մասնակցելու մի քանի խմբակների, բայց, վերջին հաշվով, ոչ մեկում էլ չի աշխատում:

Նման յերևույթներին, անպայման, պետք է վերջ տրվի:

Պաջը—ավիոքիմի անդամների պարտականությունների հետ միասին, պետք է լայն բացատրական աշխատանք տանել նաև նրանց իրավունքների մասին: Այստեղ, անպայման, կարիք չկա մեծ խոստումներ տալու և ինչ որ «առանձին» իրավունքների և արտոնությունների մասին խոսելու, այլ պետք է բացատրել նրանց իրա-



կական իրավունքները, որ ստանում է յուրաքանչյուր կոլտնտեսական կամ խորհրդային տնտեսական բանվոր մտնելով Պաջը–ավիոքիմի շարքերը: Այդ իրավունքներն ու արտոնությունները հետևյալներն են՝

Պաջը–Ավիոքիմի անդամ ընդունվածները ստանում են վճռական ձայնի իրավունք ընկերության անդամների ժողովներում, կարող են ընտրվել պատգամավորներ՝ Պաջը–Ավիոքիմի համագումարներում ու կոնֆերենցիաներում մասնակցելու համար ընտրվել բջիջի, կազմակերպության և ընկերության ղեկավարող օրգաններում:

Պաջը– Ավիոքիմի անդամն իրավունք ունի ընդունվելու համապատասխան ակումբների, պաշտպանության տների և ընկերության խմբակների մեջ: Բացի այդ, Պաջը– Ավիոքիմի անդամը կարող է օգտվել ընկերության զանազան հիմնարկներից արտոնյալ ձևով՝ ինչպես օրինակ տիրից, գրադարաններից, ցուցահանդեսներից և այլն, կարող է մասնակցել Պաջը–Ավիքիմի կողմից իր անդամների համար ամեն տարի կազմակերպվող մրցումներին:

ՊԱՋԸ–Ավիաքիմի յուրաքանչյուր անդամը, յեթե նա ակտիվ կերպով մասնակցում է ընկերության բոլոր աշխատանքներին, կարող է հույս դնել ընկերության բոլոր օրգանների աջակցության վրա, քաղաքացիական կամ զինվորական, ծովային, օդային, քիմիական և այլն միջնակարգ ու բարձրագույն դպրոցներ ընդունվելիս, յեթե, իհարկե, ինքը համապատասխանում է ընդունելության բոլոր պայմաններին:

Ինչ վերաբերում է ընկերության կողմից կազմակերպված դպրոցներին ու կուրսերին, այստեղ արդեն առաջնակարգ տեղ տրվում է Պաջը–Ավիքիմի անդամնե-

քին։ Առանձնակարգ տեղ է տրվում նաև ընկերության կողմից պարբերաբար կազմակերպվող օդային թռիչքներին, որոնց մասնակցում են միմիայն Պաջը-Ավիաքիմի անդամները։ Եթե ընկերության անդամներից մեկը գյուտ է անում, նա իր գյուտն իրականացնելու և մասսայականացնելու գործում կարող է Պաջը-Ավիաքիմի բոլոր օրգանների աջակցությունը ստանալ։

Պարտադիր զինվորական ծառայությունն անցնելիս կամ զինվորական ծառայության ընդունվելիս։ Պաջը-Ավիաքիմի անդամները ստանում են մի շարք արտոնություններ, վորոնք նախատեսված են Խորհրդային Միության Ռազմա-Հեղափոխական Խորհրդի այդ մասին հատուկ հրամանով։

Բացի այդ, Պաջը-Ավիաքիմի բոլոր անդամները իրավունք ունեն հագնելու ընկերության հատուկ համազգեստ, և կրելու Պաջը-Ավիաքիմի կրծքի նշան։

Ահա հիմնականում այս իրավունքներն են, վոր ունեն Պաջը-Ավիաքիմի անդամները, վորը պիտի լավ բացատրել ու հասկացնել նրանց։

## 4. Ուժեղացնել աշխատանքը կանանց մեջ

Պետք է ընդգծել, վոր այս ուղղությամբ մեր կազմակերպությունները շատ քիչ աշխատանք են տանում և համարյա թե ամենուրեք մենք ունենք պաշտպանության գործում կանանց դերի թերագնահատում։ Ագիտ-մասսայ աշխատանքների գծով Պաջը-Ավիաքիմի բջիջները պիտի պայքար մղեն կոլտնտեսուհիների և խորհրդային տնտեսությունների բանվորուհիների դերի նման թերագնահատման դեմ՝ խորհուրդների յերկրի պաշտպանության ամրացման գործում։ Ընկերության բոլոր կազմակերպությունները պիտի լայն աշխատանք ծավալեն ընդ-



գրկելու կոլտնտեսուհիներին և սովխոզի բանվորուհիներին ինչպես ՊԱՋԸ-Ավիաքիմի շարքերում, այնպես և նրա խմբակային աշխատանքներում։ Մանավանդ պիտի լայն չափով զարկ տալ առաջին օգնության խմբակի աշխատանքներին և ռազմ-քիմիակ. հարձակումից պաշտպանման գործին, վորին գլխավորապես և առաջին հերթին մասնակցելու յեն կանայք։ Այս աշխատանքները պիտի տանել կոլխոզի և սովխոզի կինպատգամավորական ժողովների անմիջական դիտությամբ ու մասնակցությամբ։

## 5. Աշխատանքը պատանիների մեջ

Համաձայն Պաջը-Ավիաքիմի Համամիութենական վերջին համագումարի վորոշման, մեր ընկերությունը պիտի լայն աշխատանք ծավալի պատանիների մեջ, կազմակերպելով համապատասխան «Պաջը-Ավիաքիմի պատանի բարեկամների»-ի խմբակներ։ Այդ աշխատանքը թեպետ նոր է, բայց Խորհրդային Միության շատ վայրերում արդեն կազմակերպված են այդ խմբակները և արդեն տվել են իրենց դրական արդյունքները։

«Պաջը-Ավիաքիմի պատանի բարեկամներ»-ի խմբակների կազմակերպման նպատակն է՝ տալ պատանիներին ռազմաքաղաքական և ֆիզիքական դաստիարակություն, ծանոթացնել նրանց զինվորական տարրական գիտելիքների, մոդելիզմի հետ և լիկվիդացիայի յենթարկել նրանց քիմիական անգրագիտությունը։

Պատանիների մեջ աշխատելու ձևերն ու մեթոդները պիտի լինեն հետևյալները. կազմակերպել դրույցներ, Պաջը-Ավիաքիմի գրականության կոլեկտիվ ընթերցում, նրանց մասնակից անել կազմակերպված կամպանիաներին ինչպես օրինակ՝ Կարմիր բանակի տարեդարձին, «պաշտպանութ. շաբաթ»-ին, կազմակեր-

ՀՀ Ազգային գրադարան
NL0212421

40. 857

ԳԻՆԸ 12 ԿՈՊ. (3 մ.)

# РАБОТЫ ОСОАВИАХИМА В КОЛХОЗАХ И СОВХОЗАХ

Госиздат ССР Армении
Эривань — 1931